

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոչխարից համար	12 ֆր.
արեկան	7
վեցամսեայ	7
Արսասահմանի	
համար սարեկան	15 ֆր.
վեցամսեայ	8
Ավերհիսյի համար	
սարեկան	3 ֆր.
վեցամսեայ	1.50

Ծանուցում եմ որ սուրբ Երեմիայի համար 40 ամսից իսկ վերջին Երեմիայի համար 20 ամսից իսկ Երեմիայի և Եղիսի անգամներու համար 20 0/0 զեղը կը լայն:

Վառնայի համար ձեռք 10 ամսից կ

# ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂՍՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏՄԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵԿՇԱՐՋՈՒՄ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

ОТГОВОРНИКЪ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

Դասակ եւ դրամ  
դր կիչ խմբագրութեան  
հասցիքն

Редакция на вѣстникъ  
"Шаржумъ"  
Варна

Redaction du journal  
"Charjoun"  
Varna (Bulgarie)

Պոչխարից համար  
ձեռք 15 ԱՄԵՐԻԿ

Արսասահմանի համար  
ձեռք 20 ԱՄԵՐԻԿ

Գրութիւնք ևս չեն  
տրուիր

ՇԱՐՋՈՒՄԻ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՄԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԵՏԻ Ե ԿԱՆԵՒԿ ՎՃԱՐԷ

Ս. Զատկական տոներու առթիւ  
յառաջիկայ չորեքշաբթի «Շար-  
ժում» չի պիտի հրատարակուի:

## Ս. ԳՍՐԻԷԼԵԱՆ

Գլխաւոր Գործակալ

ՊՈՒԼԿԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԵՆԵՐԱԸ  
ԽՆԻՌՈՒԱԼ ՍՕՅԻՍ ԲԱՂԱԲԻ ՎԻՃԱ-  
ԿԱՀԱՆՈՒԹԵԱՆ ՏՈՄԵՐՈՒՆ

Տոմսակ գնել փոփոխութիւնը կրնան  
իրեն գրել  
Չար-Պորիս փողոց Վառնա

## ՆԱՄԱԿՍՈՒՓ

Կարա Սիլվէն. — Պ. Սարգիս վար-  
դանան, Զեր ցոյց տուած հասցէին  
ուղարկուած ըրոր թերթերը փո-  
սէն ետ վերադարձուած են, թեր-  
թերը դադարեցուցած ենք մինչև ձեր  
կանոնաւոր հասցէ տալը:

Մեր ԶԸ ՎՃԱՐՈՂ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԸ  
կամ վճարեն իրենց պարտքերը եւ  
կամ դադարին թերթ ստանալէ:

## Վ Ր Ի Պ Ա Կ

Մեր անցեալ թուին «Սեռա-  
կիցներու» յոգուածին մէջ սպր-  
դած մէկ քանի կարեւոր վրի-  
պակները պէտք է կարգաւ հե-  
տեւեալ կերպով.

«Կատարելապէս հեռու մնալով,  
քառասնօրեայ այդ ապաշուի ու-  
րիքնազննութեան օրերու միջո-  
ցին, ամէն տեսակ հաճոյքէ ու-  
վայելքէ»

«Եւրոպայի թողններուն» կար-  
գալ «Սեռայի թողններուն»

## ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ

### ՍՍԻՈՒԹԻՒՆ

Անցեալ թուով մեր հրատա-  
րակած Ռուսոնովի վարժարանին  
ուսուցչ. Տարմնոյն շրջաբերակա-  
նը կուզայ կրկին յուզել էական  
խնդիր մը, որ մէկ քանի տարի  
առաջ ալ հրապարակի նիւթ ե-

ղաւ, առանց սակայն ունէ արդ-  
իւնք ունենալու:

Եւ սակայն Պուլկարիոյ ուսու-  
ցիչներու կազմակերպութեան  
խնդիրը լուրջ հարց մըն է, որ  
սերտիւ կապուած է մեր վարժա-  
րաններու բարեկարգութեան  
խնդրին, եթէ նկատենք որ շատ  
անգամ անկարգութիւններ կը  
ծագին, կամ վարժարանի մը ու-  
սումնական վիճակը կը կայայ  
պարզապէս միեւնոյն յարկին  
տակ ծառայող պայտօններու  
անհամբարաշխութեան պատճա-  
ռաւ: Եւ ատ հեռուներ երթալու  
պէտք չի կայ փաստեր գտնալու  
համար: Վառնայի մէջ իսկ մէկ  
քանի անգամ այդ տեսակ դէպ-  
քեր պատահեցան, որոնք յի-  
շատակել աւելորդ է հոս:

Ուսուցչական միութիւն մը ան-  
հրամեշտ է նախ ուսուցիչներու  
ընթացքը իրարու նկատմամբ  
սանձահարելու ու կանոնաորե-  
լու համար: Արդարեւ, ուսու-  
ցիչներու անվերջ հրաժարեցում-  
ները կամ փոփոխութիւնները ա-  
կընյայտին անպատեհութիւն մըն  
են մեր կրթական գործին համար,  
ասիկա ընդունուած է ըրոր ու-  
սուցիչներէն ալ, բայց անոնցմէ  
որո մինչև այսօր իր նախոր-  
դին տեղ հրաւիրուելու ատեն,  
անկեղծօրէն ու լրջօրէն հարցու-  
ցած փնտաւած է անոր հրաժար-  
ման պատճառները, և կամ մեր-  
ժած է առանց պատճառի հրա-  
ժարեցում պայտօնակցի մը տե-  
ղը անցնելու: Երբ արձակուրդի ա-  
միսները կը հասնին, ամէնքն ալ  
մէյմէկ տեղ փնտաւելու կելլեն,  
ու կը բաւէ որ սակարկութիւնը  
յաջողի, ալ ուրիշ բանով չեն  
հետաքրքրուիր: Այս գրութիւնը  
ուսուցիչներու անկման և միեւ-  
նոյն ատեն վարժարաններու ան-  
կարգութեան պատճառ կը լայն:

Չեմ կարծեր որ Ռուսոնովի հը-  
րաւէրը արձագանգ գտնէ ուսու-  
ցիչներու դատակարգին մէջ: Ու-  
եթէ երբեք կազմուի իսկ այդ  
միութիւնը, ոչ յարատեւութիւն  
ու ոչ արդիւնաւորութիւն պիտի  
կրնայ ունենալ: Ուսուցիչները

անհատապէս նախ պէտք է ինք-  
զինքնին վարժեցնեն զոհողու-  
թիւն ընելու պայտօնակցի մը  
համար, որպէս զի անոնց միու-  
թիւնը կարենայ ուժ մը ներկա-  
յացնել: Յաւալի է հաստա-  
տել որ ամենէն աւելի բարոյա-  
կան ուժ և ճշմարիտ զարգացում  
ունենալու կոչուած մեր ուսուց-  
չական դասակարգը, իր ասպա-  
րէզին մէջ, ամենէն նուազ յար-  
գողը եղած է այդ ուժին ու զար-  
գացումին: Անշուշտ, այս մտա-  
ծումները անհատապէս որ եւ է  
ուսուցչի չէ որ կուզուի ու չեմ  
կարծեր որ, իրենց մէջէն այդ  
կարգի կասկած մը ունեցող գտ-  
նուի: Ուսուցիչներու հոգեբա-  
նութեան, անոնց ձգտումներուն  
և անցեալին մէջ եղած անյաջող  
փորձերուն մասին ունեցած ծա-  
նօթութիւնս ինձի իրաւունք կու-  
տայ թերահաւատ ըլլալու նաեւ  
Ռուսոնովի ուսուցչական մարմ-  
նին ներկայ կոչին հանդէպ:

Այսու հանդերձ կրթական գոր-  
ծով հետաքրքրուող ամէն ան-  
հատ, ուսուցիչ, հոգաբարձու  
կամ խմբագիր պէտք է ուժ տայ  
Ռուսոնովի կոչին, որպէսզի գտնէ  
ընդհանուր ուսուցչական առա-  
ջին համագումար մը տեղի ու-  
նենայ այս տարի: Գոնէ քայլ մը  
առնուած կը լայ վերջապէս, և  
ուսուցիչները ապացուցած կը լ-  
լան ատով թէ բարի տրամադ-  
րութիւնները չեն որ կը պակսին  
իրենց:

ՇԱՅԱՊ

## ՆԱՄԱԿ ԼՕՆՏՕՆԵՆ

Թղթակցութիւն մը Երկրէն. —  
Տր. Ռէյնոլտս. — Հնչակեան  
եղբայրացուական ոճիին  
հետեւանքները

Ուրիշ ատիթով մը կարծեմ պատե-  
հութիւնը ունեցած էի յայտնելու  
«Շարժում» ընթացողներուն որ՝ ա-  
զատականներու բարձրակարգին մէջ  
տարած յաղթանակէն իվեր՝ Լոնտոն-  
եան մամուլը ճշմարտացած էր մէկ ան-  
յալ

օրաթերթով մը. — «Թրիպլին», — որ  
սահմանուած էր ըլլալ պայտօնակա-  
ն օրկանը ներկայ կառավարութեան  
թէպէտեւ խոստացուած և յուսացուած  
արդիւնքը չը տուաւ: «Թրիպլին»,  
բայց և այնպէս, շնորհիւ իր սղու-  
թեան միւս ըրոր ազատական լայնա-  
ծաւալ օրաթերթերուն վրայ, յաջողե-  
ցաւ գոնէ ազատականութեան «Տէլի-  
թէլէկրաֆ» հանդիսանալ, այսինքն  
իր շրջաբերութիւնը ունենալ ազա-  
տական ունեւոր և ազնուական դա-  
սին մէջ զխաւորապէս Այսուհանդերձ  
«Թրիպլին» բնաւ չը դադարէ հզոր  
բրորականտիւզ մը ըլլալէ իր դաւա-  
նած գաղափարներուն, մինչդեռ «Տէլի-  
թէլէկր» որ այժմ ինչպէս է կրօնական  
— արմատական վաճառականի մը ձեռքը,  
հետզհետէ կը դառնայ օսկանը հա-  
կանգլիքան եկեղեցականներուն:

«Թրիպլին» վրայ այս բացատ-  
րութիւնը տալուս բուն պատճառն  
այն է որ ցոյց տամ թէ անոր հայ-  
կական կեանքով ու հարցով զբաղիլը  
որքան մեծ ու շահեկան նշանակու-  
թիւն ունի ժողովրդի մը հասարակ  
խաւերն ոգեւորելը շատ զիւրիւն  
գործ է, կարեւորը անոնց գլուխները  
չահագրգռելն է, և «Թրիպլին» ըն-  
դունակ է ատոր՝ եթէ միայն ատիթ  
տրուի իրեն ատով զբաղելու:

Իր անցեալ օրուան թիւով, յիշեալ  
օրաթերթը զետեղած էր կտոր մը՝  
«Սովաման Հայաստան» վերտառու-  
թիւնով, որ պիտի ամփոփեմ հոս մի-  
այն՝ շափազանց երկար ըլլալու  
համար:

«Վերջին տեղեկութիւնները Մտա-  
ւոր Արեւելքէն» զարուբելի մանրա-  
մասնութիւններ կը հաղորդեն Հայաս-  
տանի զժբախտ քրիստոնեայ ժողո-  
վրդներու մասին: Վան, Պիթիւս,  
Սասուն և այլուր, ժողովուրդը սո-  
վաման կը լայ բառին իսկական ա-  
ռուժով և ժանտախտը տարածուած է  
երկրին չորս կողմը:

Թղթակից մը գրելով անցեալ ա-  
միս այդ կողմերէն, կըսէ. —

— Այցելեցի այսօր Ուուչիկ(«»)   
գիւղը, որ, ափոքս չը տարբերի  
ներկայիս հարիւրաւոր միւսներէն:  
Պատկերները սրտաճմլիկ են: Արմատի-  
քը սովի գնով է և ժողովրդին մե-  
ծամասնութիւնը կը ջանայ իր գո-  
յութիւնը պահպանել տեսակ մը հա-  
ցի վրայ՝ որ պատրաստուած է անց-  
եալ աշնան գինեղիւնութիւնէն մնացած  
խաղողներու ազացած սերմերէն և  
մորթիքէն, զորս սովորական պայ-  
մաններու ներքեւ կը գործածուէին  
որպէս վառելիք: Զարմանալի չէ որ  
թիֆո և այլ մահացու գիւժութիւնք ախ-

ՆԱՄԱԿ ԲՂԻԵՆ

տեր վրայ են հասած : Իրերու այս կացութիւնը, անշուշտ, կը պարտի շարք մը պատճառներու, — գէշ հունձքի և վախառուններու արարքներուն, որոնք ցորենը բերած են բարձրացուցած գիներով: Սակայն ամենէ աւելի պէտք է պատասխանատու բռնել կառավարութիւնը: 1896ի կոտորածներէն վերջ երկիրը բնակաւարար ծանր դժբախտութեանց դատապարտուեցաւ: Ժողովուրդը զբոյժ ունեցաւ ամէն բանէ, և սա այնքան բացայայտ էր՝ որ նոյն ինքը կառավարութիւնը հրաժարեցաւ երեք տարի հարկեր հաւաքելէ, Հիմայ, յանկարծ փոխուած է ամէն ինչ: Կառավարութիւնը կը պահանջէ նախորդները, և այնպիսի կատաղի կերպով՝ որ նոյն իսկ կը տանի տանիքի տախտակները՝ վճարման բազը փակելու համար: Դաշտերը կը ծախուին քրտերը պատրաստ կեցած ըլլալով: Գնելու համար, իսկական արժեքին մէկ-հինգերորդով և մէկ-տասներորդով: Սա ալ դէրորիզմի նոր եղանակ մըն է: Ընդհանուր կոտորածը կը հետեւի անհատական հալածանքին: Ասի մէկ բացատրութիւն ունի միայն: — Սուրբանի կառավարութիւնը վճած է բնակիչ ընել Հայաստանի մեր եղբայր քրիստոնեաները ոչ այլ ինչ պատճառով՝ բայց որովհետեւ անոնք քրիստոնեայ են: սակայն այս գործը յառաջ կը տարուի նուազ ցնցող մեթոտով մը և հետեւաբար, աւելի ապահով կերպով՝ իր տեսակետէն՝ քան նախորդ կոտորածները:

Այս նամակէն վերջ «Թրիպիւն» միտքը կը յղանայ ներկայացուցիչ մը զրկելու Տր. Ռէյնօլտսին և անոր կարծիքը առնելու Հայաստանի ներկայ կացութեան մասին: Անուշեցու այս մարդը կը սկսի իր պատմութիւնը՝ թէ ինչպէս 36 տարիներէ ի վեր կը գտնուի թիւրքական կայսրութեան մէջ և 33 տարիներէ ի վեր Վան, ուր աշխատած են ինք և իր կիները: «Ինչպէս է ժողովրդի աջմուտ զբուրութիւնը, կը հարցնէ թղթակիցը: «Ողբալի: Ահոն ի մանրամասնութիւններ կընդունիմ պայտօնակցէս, Տր. Ըլբրէն, որ զիս կը փոխարինէ Վան՝ իմ բացակայութեանս միջոցին: Միջոց մը գտած են թշուառութիւնը բառնալու: Տիկին Ըլբր. օրինակի համար, ունի 200 կանայք զբաղուած»:

որոնք ժապաւէն կը շինեն իր հաստատած արհեստանոցին մէջ: Կրօնէ թէ սարսափելի տեսարաններու ականատես կըլլայ ամէն օր: Մանօթ կիներէ և տղոցմէ իրեն եղած աղբիւրները հոգեմտիկ և եւ կը յայտարարէ թէ՛ կարող չէ երկար դիմանալ:

— Ինչ է պատճառը սոյն թշուառութեան: — Աւելի կը բազմայի քաղաքական կապ ունեցող խնդրոց մէջ չը մտնել: Վանը թողուցի անցեալ օգոստոսին, Լաւ հունձքի մը խոստում կար, բայց դժբախտաբար հակառակն է եղած: Տեսայ հոս Լորտ Ֆիցմորիս և Մր. Պրայս: Երկուքն ալ վերին աստիճանի համակրանք ցոյց տուին: Մր. Պրայս կը խորհի որ՝ Եթէ է նախագահ Ռուզվելթի հայեարողութեան նպատակը գործի մը նախաձեռնութիւնը ըստ անձնէ, պիտի ունենայ Անգլիոյ բարոյական անշուշտութիւնը: (

Յետոյ, Անգլիացի վարանտ թղթակիցը, աչտի առջ ունենալով սոյն զարհուրաբեր իրականութեան մտատեսիլը, երբ կը յայտնէ սրբանուէր պատուելիին՝ թէ Հայաստանը վտանգաւոր պայտօնավայր մը չէ՞ այս միջոցիս, վերջնոյն զէմքը կը պայծառանայ և տարակոյս չուիմ որ աչքերն ալ երկինք ամբարձած՝ կըսէ: — Պիտի ու ես պիտի վերադառնանք Յուրիսին: Ինչ կայ լաւագոյն՝ քան մեզին վարտականութեան դաշտին վրայ:»

Անջի երեկոյ իրիկնային թերթ մը գնած՝ դատական հետաքրքիր դրուագի մը մանրամասնութիւնները պրպտելու վրայ էինք, երբ աչքերունու հանդիպեցան քանի մը սողեր՝ որ ոչ մէկ հայու ականջին ախորժ կը հնչեն:

Հնչակեան եղբայրասպան ոճիրներուն պօզալի պատմութեան արձագանգն է որ կը լսուի նորէն՝ արատելով իր հետ, անգամ մը Եւս, հայ անունը:

Հին-Հնչակեան հատուածի նախկին կեդրոնավայրն էր Բէքճմ կոչուած արուարձանը Լոնտօնի, երբ մէկուն եղբայրասպան ոճիրը միւսը փոխարինելով իր հետ, անգամ մը Եւս, հայ անունը:

[\*] Ստորագծումները մեր կողմէն եղած են.

նեց միեւնոյն ոճիրով Լոնտօնի նման տեղ մը, այն վայրը, ուր հիներուն սկենտրօնը՝ կը գտնուէր, գրեթէ պարպուեցաւ շուրջ բոլորի գրացիներէ, որովհետեւ խեղճերը կը վախնային և չէին ուզեր անխոյզ կեանքներին նեղել ատանկ «մարդասպաններու» ներկայութեամբ: Ապացոյցը ակնեբեւ է և մինչեւ օրս ալ, հակառակ տնոնց 16-17 ամիսներէ ի վեր հեռացման, բազմաճամ զուարթ ընտանիքներով ոգեւորուած տուները այսօր բուերու կայանի մը նմանութիւնը ունին, իւրաքանչիւրին առջեւ դրուած խոյր տախտակով մը՝ որուն վրայ գրուած է. «վարձու կամ ծախու» տուն: Եւ ո՛րք ամէնէն արտառոցը — Այդ տուներու մեծամասնութիւնը կը պատկանէր մէկ անձնաւորութեան մը — մէկ «կապիտալիստի» մը Ու... ատկէ աւելի ինչ մեծ յաջմանակ «սոցիալ-դեմօկրատ» կուսակցութեան մը համար... Եւ այդ յաջմանակը կը շարունակուի այսօր ի բացակայութեան եւս յիշեալ «սոցիալ-դեմօկրատներուն»: Առջի օր արուարձանին ամէնէ առաջնակարգ պողոտաճառ-ծաղկա վաճառը կարձանագրէ անունը սնանկութեան մատեանին մէջ՝ 942 ոսկի բացով մը:

— Ինչ է սնանկութեան պատճառը, կը հարցնեն մարդուն: — Այդ հայերը, կըսէ եկան իրար սպանեցին, մէկ-երկուքը նոյն իսկ դրանս առաջ, ժողովուրդը հեռացաւ վախէն: Հեռացան անոնց հետ նաեւ յաճախողներս և նախորդ տարուան «գէշ սէզօնին» վրայ գալով ներկան՝ դատապարտեցին զիս սոյն սնանկութեան: Ահա թէ ինչ խեղճութիւն այդ հայերը... Եւ կուէն հոգը չէ եթէ հայր աշխարհացուցեց բարիքներ ալ կատարէ, սակայն քի մը եղկելիներու աղտոտ արարքը բարտախու է մորդը ազգի մը անունը արատելու, ամէն անգամ որ պատեհութիւնը ներայանայ:

Այսուհանդերձ, թո՛ղ հրճուին Հընչակեան երկու հատուածներն ալ: — մէկը՝ իր վրէժխնդիր հոգիին լիւրջ յագուրդ տալուն, միւսը՝ անուղակի իր ոսոցիալ-դեմօկրատական՝ յաջմանակները յառաջ վարելուն, իսկ մեզ կը մնայ բաժին՝ զգուանքի թուք մը ատոնց վրայ:

Մէկուն հոգը չէ եթէ հայր աշխարհացուցեց բարիքներ ալ կատարէ, սակայն քի մը եղկելիներու աղտոտ արարքը բարտախու է մորդը ազգի մը անունը արատելու, ամէն անգամ որ պատեհութիւնը ներայանայ:

Մ. ՅՈՒԿԿ

ԱՊՊԵ ԺԻԼ

ՄԱՍ Ի (Հատուածներ)

Հօրեղբայրս սրբեց ջերմէն կեղտոտած բերանը, ուսկ մը օշարտի եւս առաւ, ու ցաւազին ճիգերով ընդմիջուած ձայնով մը, այսպէս ըսուեցաւ:

— Միտքի զաւակս, ամիսներ առաջ արգէն ես կտակս ըրած եմ... քեզի բան մը չեմ ձգած ոչ ալ քու ծնողքիդ... Մայրդ անշուշտ պիտի կատարէ, բայց զուն այնպիսի տարիքի մը մէջ կը գտնուիս, որուն համար դրամական խնդիրները բնաւ չկարելու թիւն չունին: Կը յուսամ որ չի պիտի վշտանաս ապագային... Պիտի վշտանաս:

— Ոչ, հօրեղբայր, կակազեցի:

քիչ մը նեղուելով ու կարմրելով: Գլխի նշանով մը շնորհակալ եղաւ, ու յետոյ վերսկսաւ:

— Եթէ զքեզ ժառանգազուրկ կընեմ, մի՛ հետեւցներ թէ չեմ սիրեր քեզի... Գու ծնողքդ բաւական հարստութիւն մը պիտի ձգէ քեզի ու պէտք չի պիտի ունենաս որ անոր վրայ իմ ալ աւելնայ: Ծատ ժամանակէ ի վեր հետաքրքիր գաղափար մը ունեցած էի հոգեբանական փորձ մը փորձելու: զոր պիտի իմանաս մահուանս յաջորդ օրն իսկ: Ուրեմն ալ չի պիտի վշտանաս, այնպէ՞ս չէ:

— Այնպէս է, հօրեղբայր: — Հիմա, մտիկ ըրէ զիս: Բոլոր անոնց պէս որոնք գէշ ապրած են, ես ալ երկար ատեն սոսկալի մահէն... Բայց անկէ ի վեր շատ անդրադարձայ, վարժուեցայ զայն ճակատէն դիտելու ու հարցափորձելու: Ալ զիս չի զարհուրեցներ հիմայ: Անցեալ

գիշեր, քունիս մէջ, կերպէի որ մահը անհուն լիճի մը նման էր, որ ոչ հօրեղբուն ունի, ոչ սահման. լիճ մը՝ ուր կը գայի թէ կը սահէի մեզմօրէն սպիտակ կոհակներու մէջէն, երկնային, անհուն սպիտակութիւն... միեւնոյն վայրկեանի մահը կը նըմանէր այս հսկայ երկնքին, որ հոն առջիւս է:

Արբան զուրթ վերցուց ու վիզը պատուհանին երկնցուցած, աչքերը գիտութեամբ լեցուն, իր ակնարկը պտտուց միջոցին անհունութեամբ:

— Այո, կրկնեց, մահը նման է այս հսկայ երկնքին:

Վայրկեան մը լռեց, յափշտակութեամբ հետեւելով ամպերու յամր ու լուսաւոր վերելքին անտառերէն: Յետոյ կրկին գլուխը բարձր քրաւ, անկողնին մէջ երկնցաւ ու միամազձոտ ձայնով մը ըսաւ:

— Կեանքս զուր անցուցի, պզտիկ

Սպանութիւնները մեր երկրին մէջ բնաւ կանգ առած չունին, Երկրորդ արիւնոտ ճահճին մէջ լողացող հրէշը չի յագնար հայ արիւնով: Օր շանցիւր որ ճիվան կտրիճներ դաւաճանօրէն շսպանուին աւազակ քիւրտերու ձեռքով:

Այս անգամ գրիչը ձեռք կառնեմ նկարագրելու համար սիրելի եւ կըտարիճ երկրասարգի մը եղբրական սպանման պարագաները, որ այնքան վիշտ պատճառեց ամբողջ Բիւրի գաւառին: Անշուշտ նոյնքան խոր տրտմութիւն պիտի պատճառէ այս գոյժը իր բոլոր ընկերներուն որոնք ութ տարի միեւնոյն դպրոցին մէջ եւ միեւնոյն գրասեղանին վրայ, իրենց կեանքին զուարթ ու երջանիկ շրջանն անցուցին այդ վեհագի երիտասարդին հետ, ծանօթ անոր ազնիւ ու լուրջ բնաւորութեան, յանդուգն ու համարձակ սրտին, գեղեցիկ զէմքին ու պարթեւ հատակին:

Այո՛, սպանուած է մեր ամենասիրելի ընկերը, ոճրագործութեան բնագունակ ձեռքեր խնցիլ հատ մըն ալ այն պայտելի ու ամբաստի դէմքերէն, որոնք իրենց արեւակիցներուն վրայ մտածել եւ անոնց դառնութիւններն սփռելու տրամադիր սիրտ մը ունին:

Անցեալ տարի օգոստոսի վերջերը մեր սիրելի ընկեր Մարտիրոս Ամբրիկեան քաղաքէն Ուրբա գիւղ ճամբորդած ժամանակ, Ուրբա մէկ ժամ հեռաւորութեամբ կուրոյին Ձոր ըսուած տեղը կը հասնի, ուր իրեն կը հանդիպին Գեղեցիներու ծանօթ Հիւսէյին և Անմէտ պէյերու երկու որդիքը: Այս վերջինները ամիսներէ ի վեր մտադրած են եղբր սպաննել Մարտիրոսը, բայց անոր քայտարտութեանը ծանօթ ըլլալով՝ համարձակութիւն ունեցած չեն իրենց եղբունական մտադրութիւնը գործադրելու: Ուստի սոյն հանդիպումը յարմարագոյնը պեպելով, կը մօտենան ու նենգ ու կեղծ թէմէնաներով կը բարեւեւ երիտասարդը ու սիկար մը կը խնդրան: Երբ երիտասարդը ձեռքը զբրպանի կը տանի ձխապտուր հանելու, խօսակցին հօրեղբորդին շատոնց ի վեր պատրաստուած ծրագրի մը համաձայն ատրճանակի առաջին հարուած մը կուտայ երիտասարդին կուրծքին: Երիտասարդը յանկարծա-

Ալպերթս... Որովհետեւ երբէք չի կրցայ նուազել իմ մէջս աճող աղտոտ կիրքերը, քահանայի զպուրած կիրքեր, ժառանգական կիրքեր, արդիւնք մօրս միաստիքականութեան ու հօրս ալքովականութեան: Եւ սակայն ես միշտ կուր մղեցի... Անոնք աւելի զօրաւոր ելան: Այս կուր ու այս պարտութիւնը զիս կը մեռնեն: Երբ միտքս դրի հոս քալ ու այս խաղաղութեան մէջ սպրիլ, վճեցի մոռնալ անցեալը, ապրիլ երջանիկ, ու աշխատիլ, որովհետեւ ծրագրիներ ունեւիս: Բայց չի կրցայ: Հոս, ինչպէս ամէն տեղ, ինքզինքս դէմ տուէմ գտայ հրէշին հետ: Ահոն ի շարժարաններ կրեցի... Ուստի արժանի եմ մեռնելու... Բայց, եթէ գէշ վատթար և հայտնեալ սպրեցայ ու տագնապայից եղաւ կեանքս, պայծառութեան մէջ մեռնիլ կուզեմ այսօր: զոնէ օր մը կուզեմ վայելիլ այն հաճոյքը զոր երբէք չեմ ճանչցած,

կիր եկած կը փորձէ ինքզինքը պաշտպանելու բայց արդէն ուշ էր, յաջորդաբար ցնդակի հինգ հարուածներ ձիւն վար կը ձգեն զինքը Դաւաղի լեռները իրենց քստինելի ուժերը կատարելաբար ընկելու համար, դաշտոյնի 60 հարուածներ կուտան զոտին, մարմինը այլակերպելով ու կտոր կտոր ընկելով եւ ձորին աւազներուն մէջ կը ծածկեն ու ձին առնելով կը փակուին:

Ճամբան կը հանդիպին Մարտիրոսին ընկերացող հայու մը որ տեսնելով Մարտիրոսին ձիւն կը հարցունէ թէ տէրը ո՞ր է: Այս հարցման վրայ ոճրագործները կը պատրաստուին յիշեալ հայն ալ սպաննել Մարգը կռահելով որ խորհրդաւոր բան մը պատահած կայ, անմիջապէս կրակի փախչիլ զէպի ճամբուն հիւսիսային կողմը գտնուող ապաստաններուն մէջ, եւ անկէ կելլէ Մեղրի, կղերութիւնը հոն գտնուող Պուրսեցի հողագործ հայերուն յայտնելու: Հայերը 4-5 ընկերով կը հաւաքուին եւ իսկոյն ձորը կը մտնեն տեսնելու համար թէ ինչ պատահած է ու երբ ձորին կեդրոնը Պալ Աղբի լին քով կը հասնին, արեան հեռքեր կը տեսնեն, Աւագին տակը հետազոտելով այլակերպուած ու յօշոտուած մարմինը դուրս կը հանեն ու անմիջապէս կառավարութեան լուր կուտան: Աղետաւոր լուրը կայծակի արագութեամբ կը տարածուի մօտակայ գիւղերն ու քաղաքները: Փողոտորդը անագին աղմուկով ու լացով կը դիմէ ոճրագործ վայրը ի թիւրք այլոց, կուգան նաեւ կառավարութեան վարչաց պաշտօնեաները ու մարմինը քաղաք կը փոխադրուի, այդ օրը սուգի օր մը եղաւ մեզի համար, ու ամենքս կողորայինք մեր ծանօթ այդ կորիճին կորուստը:

Մարտիրոս հագիւ 6 ամսուան ամուսնացած էր ու զեռ նոր թեւակոխած իր 24րդ գարունը, Հապա զօհին մայրը, որ խելագարի նման իր ծամբերը կը փխտտէր ու հայրը, որ լուռ ու մունջ, անգամ մը աչքերը զէպի երկինք կը յայտէր, ու անգամ մըն ալ իր կորիճին արիւնտ դազաղին:— Բժշկական քննութիւններէ հետք մեր ընկերոջ մարմինը գերեզման թշնամեցին:

Իսկ ոճրագործները կը փախչին Սանճագ Հիւսնի պէյին քով, մեր արդարադատ(°) կառավարութիւնը զանոնք կը ձերբակալէ ու կարին կը

զրկէ լուի ձեւակերպութեան համար, ուր դատական պաշտօնատան մէջ սենեկին մէջ ամենայն հանգստութեամբ կեանք կը վարեն, իսկ աստին Գրիի բանտին մէջ, երկու հայ երիտասարդներ, չղթաներու տակ կը հեծեն, անոնց մին, Բալուցի կարօ չի դիմանալով բանտին տանջանքներուն այս օրերս մեռաւ, իսկ Սարգիս Մուրատեանը մինչեւ այսօր բանտը կը մնայ, Ու գիտէ՞ք ինչու, որովհետեւ ոճրին օրը, առաջինը այդ ճամբէն անցեր է, իսկ երկրորդը յանդգութիւնը ունեցած է առաջին անգամ զիակին մօտենալու:

ՍԿԱՒՈՐ

ՆՈՎՈՒՆ ՎՐԷՄԻԱՆ ԵՒ ՀԱՅՆԵՐԸ

(օ)

«Մշակի» նախորդ համարներէն մէկում մենք ապեցինք Ք. Վէրմիլեանի «Նովոյ Վրէմիա» լրագրի մէջ տպած յօդուածի թարգմանութիւնը Մենք այն ժամանակ եւս զարմանք էինք յայտնել, որ Մուվորինի օրգանը տպել է այդ յօդուածը առանց իր կողմից սովորական ինսինուտցիաներ եւ ներքուսներ անելու, Այժմ նա տպել է պատասխան «Հայկական» ինտրիքս» վերնագրով, որտեղ երգում է իր նախկին երգը հայերի սեպարատիզմի, «Մեծ Հայաստան» ստեղծելու եւ այլ «հայկական իրաւիքներ» մասին:

«Պ. Վէրմիլեյը— առում է յօդուածագիրը— չէ հաւատում հայկական ինտրիքսին, նա նրան համարում է վաղուց թաղված, Բայց փոխարքայի զիւանատանը, կովկասեան դատարան ներում, կովկասեան ուսումնարանական շրջանում եւ տեղական եւ կենտրոնական բազմաթիւ հաստատութիւններին մէջ պահուում են բաւական շատ ղօկուսներուային տեղեկութիւններ, որոնք անհերքելի կերպով ապացուցանում են, թէ հայկական ինտրիքս— լեզուաբան չէ, այլ ամենադառն իրականութիւն: Այդ ղօկուսներու կարելի է հաստատել, թէ ինչպէս ներշնչվում էր նայ ժողովրդին անկախ «Մեծ Հայաստան» ստեղծելու գաղափարը, ինչպէս հայոց դպրոցներում աւանդում էին կեղծված հայոց պատմութիւն, իսկ աշխարհագրութիւնը սովորում էին առանձին քարտէզների վրա, ուր «Մեծ Հայաստան» սահմանները հասցրված

են մինչեւ Վրոնէժ, այդ ղօկուսներու ներք կը պատմեն նոյնպէս, թէ ինչպէս հայերը վանում էին Անդրկովկասից ուսուցողականներին եւ ներանց տեղ բերում էին թիւրքաց հայերին, որոնք իսկոյն պահանջում էին իրան համար հողեր, թէ ինչպէս հայեր սպանում էին ուսուցիչներին եւ սպանում էին նրա համար, որ նրանք յանդգնում էին զնալ հայկական հոտանքի դէմ եւ պաշտպանում էին ուսուցական պետական գաղափարը ու չէին կաշտովում, թէ ինչպէս սպանում էին վկաներին, փողեր էին կորզում հայ հարուստներին՝ հայոց թագաւորութիւնը քանդելու համար, ինչպէս զաշն էին կապում հրէաների, Ֆինների, լեհերի հետ՝ Ռուսաստանի դէմ ընդհանուր արշաւանք սկսելու համար, Հօ չէ կարելի ենթադրել, որ բոլոր այդ ղօկուսները չէին ինքը ուսուց վարչութիւնը:

Մենք միայն առաջ բերինք Մուվորինի օրգանի մարգարտներին մի քանիս, ցոյց տալու համար, որ զուր եւ միանգամայն ապարդիւ են անցնելու այն բոլոր ջանքերը, որ մի քանի հայեր, եւ դրանց թոււում պիւրմիջեանը գործ են զնում այն նուպատակով, որ փաստերով, բարեխիղճ, անաչառ ուսումնասիրութիւններով համոզեն Մուվորինի եւ նրա արժանաւոր համախոհներին իրանց սխալի մասին հայերի վերաբերմամբ: Մուվորինների պէս «հայրենասէր» ներք միշտ կը մնան հայաստեաց, Ֆիննասեաց, լեհասեաց եւ նրանց նշանաբանը կը լինի միշտ ջնջել այդ քարերը Ռուսաստանում կամ ստորկացնել նրանց: Առանց քաղաքելու իր յօդուածի վերջում, Վէրմիլեանին հակաճառող պարունը ցինիկաբար ասում է, թէ «քաղաքական խելացընորութեան ակտ կը լինի ուսուցական կառավարութեան կողմից, եթէ նա փոխանակ խոստովութիւնները զսպելու կովկասում, հոգ տանէ պոլիտեխնիկումներ, զէմստվօներ եւ երգուեալների դատարաններ մտցնելու»:

«Մշակ»

ԱԶԳԱՅԻՆ ԲՐՈՆԻԿ

Ասկէ առաջ հարգողած էինք թէ Ռուսուզգի հայ նուագախումբը Չատկի տօներուն վառնայ

պիտի այցելէ և նուագահանգէս մը պիտի սարքէ: Խումբին անդամները երկար թղթակցութիւններ ունեցեր են այս մասին տեղւոյս երիտասարդութեան մէկ քանի ներկայացուցիչներուն հետ որոնք ստանձնած էին օր առաջ հանդէսին համար սրահ մը վարձելու հոգը: Դժբախտաբար Չատկի առաջին երկու օրերուն համար, բոլոր յարմար սրահները կանխաւ վարձուած ըլլալով տեղւոյս երիտասարդութեան ջանքերը ու է արդիւնք չեն ունեցած: Այս պատճառաւ Ռուսուզգի նուագախումբը որոշած է մայիս ամսոյ մէջ կատարել իր այցելութիւնը:

—Քանատայէն թղթակցից մը հետեւեալ ծանօթութիւնները կուտայ մեզ տեղւոյն հայերուն վրայ:— «Հոս բազմաթիւ հայ պանդուխտներ կան, ամէնքն ալ Հայաստանի գաւառներէն, ու զեռ ամէն օր ալ կը վազեն կուգան, այս ամսոյն միայն 100 հոգիէ աւելի գաւառացիներ եկան: Եթէ տեսնէք անոնց վիճակը, սաստիկ պիտի արգահատիք: Հայաստանի բարեկամ ազգին այս հոգին վրայ, անգլիացի գործաւորները շարունակ կը նախատեն զանոնք ու կը թքեն վրանին, հրէայէն աւելի վատ տպաւորութիւն թողած է հայ գործաւորը անգլիացի գործաւորին վրայ: Ասկէ զատ հոս եկող այդ գաւառացի եղբայրները, քանի մը ամիս վերջ, իրենց ազգութեան ու է նշոյլը չեն պահեր այլ եւս վրանին: Ի միջի այլոց իրենց անուններն անգամ կը փոխուին: Պետրոսը կըլլայ Փիլիթ, Տիգրանը՝ Տիք, եւն, մօրուքին հետ պիտի անալ կած իրոն, ու հայութիւն, հայրենիք, զաւակ, ընտանիք, ամէն բան կը մոռցուի յաւիտեան: Իր խնդրենք հայ խմբագիրներէն որ զգուշացմեր պանդուխտ եղբայրները անխորհուրդ կերպով այս կողմերը

այսինքն ամենակատարեալ հանգիստը ուղեղիս, սրտիս ու զգայարաններուն:

Հիւանդը երկարօրէն հեծեց, յետոյ շարունակեց:

—Չեմ ուզեր որ քահանան տունը ներս ոտքը կոխէ... չեմ ուզեր... Անոր ինծի ըսելիքը ես իրմէ աղէկ գիտեմ, ու այդ հսկայ ապուշին այցելութիւնը զիս կը նեղէ, կը բարկացնէ ու վերջին ժամերուս հանգիստը կը խռովէ: Եթէ Աստուած կայ, անշուշտ դուն ալ կը մտածես թէ այս թանձրամիտին կոշտ պատկերը ասած չէ որ պիտի ներկայանայ ինծի: Եթէ աղօթել ուզեմ, ես ոչ մէկուն պէտք չունիմ, Թող ձգեն զիս որ ուզածիս պէս մեռնիմ, ես քեզի հանգստութեանս պահպան կընեմ: Ոտք տուր որ, եթէ քահանան ուզէ դուս բանալ, դուն պիտի վաճառես զայն: Խօսք տուր, Իրեպիտի հասկցնես թէ, ես կը մերժեմ

զինքն ընդունիլ, թէ ոչ իր սուտ ազօրութիւնը կուզեմ ոչ ալ այն շարունակութեամբ որ ձիւնակերպութիւնը զոր մահամերձներուն անկողինքով կը խաղան: Կը խոստանա՞ս որ պիտի պաշտպանես զիս հոգեւարքի բոլոր բանարարիչները դէմ, եթէ մայրդ իսկ ըլլայ:

—Կը խոստանամ, հօրեղբայր: —Լաւ զաւակս, շնորհակալ եմ: Յետոյ, ինքիբնը խօսելով, աւելի կամուք ձայնով մը ըսաւ:

—Հետաքրքիր չէ՞ ինչ որ հոգեւոր մէջ տեղի կուսնենայ: Որքան որ աւելի հոգեւոր կը խաղաղի, այնքան Աստուծոյ գաղափարը բանականութեան կը ջնջուի... ու չեմ հասկնար զայն... Աստուած... Աստուած... Երբ վաթսրօրէն կապրէի, կը հաւատայի Աստուծոյ, անոր գաղափարը կը զարհուրեցնէր զիս... Այսօր ի զուր կը փնտրեմ զայն, երբէք չեմ գտներ... Ընդմիջտ մեկնած է... Աստ-

ուած, արդեօք խղճահարութեան իտէալ մարմնացումն է ան:

Յետոյ, քանի մը վայրկեան երազանքի մէջ մնալէ յետոյ, ինծի դարձաւ:

—Ու հիմա, ալ մի տխրիր տղաս, երբ աչքերս քու փոքրիկ գլխուդ դարձնեմ, արցունքիդ հոսիլը չի տեսնեմ: Ժպտէ ինծի... Պէտք չէ արտասուել սիրած մէկ էակից մահուան համար: Կաթոլիկ կրօնքն է որ մահը մտայ գարնուրանքի մը վերածած է: Մինչդեռ մարդուն սգաւորութիւնն է, կեանքի բանտարկեալին վերադարձը զէպի իր ճշմարիտ հայրենիքը... Ա՛խ, կը փափաքէի որ արցունքի ու սուգի տեղ, օրհասներու սենեկին մէջ նուագ ու խրատական ըլլար... Կը փափաքէի... կը փափաքէի...

Կանգ առաւ, կարծես բառեր փնտռեց... —Չեմ գիտեր թէ դեռ ինչ կուզէի քեզի այսպէս խօսելուս պատճառը

այն է որ ինքզինքս վախճանիս հասած կըզգամ: Վարկեաններ կան որ կեանքը անգամներէս կը թափ թփի, սրտիս մէջ կը ցածքի, խելքս գլխէս կերթայ, կը պղտորի, միջոցին մէջ կը կորսուի, ու ինծի այնպէս կուգայ թէ անսահման ու անյատակ լծին վրայ կը տարուբերիմ, մեկնելէ առաջ, զեռ լուսաճաճանչ սպիտակութեանց մէջ յաներեւուութեանց, կուզէի քեզի բան մը տալ որ դրամէն աւելի արժէք ունենայ, այն է կեանքի գաղտնիքը... Շատ մտածեցի ես անոր վրայ, Սիրէ բընութիւնը, տղաս, ու դու քաջ մարդ մը պիտի ըլլաս, երջանիկ պիտի ըլլաս... Երկնային բոլոր վայելքները, այս սիրոյ մէջ ամփոփուած են, ինչպէս նաեւ բոլոր առաքելութիւնները... ինչ որ բնութեան հետու է, յոռի է ու անբուժելի վիշտեր ու ապականիլ խղճահարութիւններ կը պատճառէ:

(Շարունակելի)

դիմել է թող չի կարծեն թէ հոս ոսկին փողոցը փռուած է Ընդհակառակը երկրին երեսէն հարիւրաւոր մեծը վարերը իջնելու է արեւէն ու լոյսէն տարիներով զրկուիլը յանձն առնելու է քանի մը ճերմակ մետաղէ կտորուանք ձեռք անցնելու համար ան ալ եթէ իրենց ազգէն աշխատող չի գտնուի ։ Որովհետեւ օտարներուն կը ձգեն միայն այն տեսակ գործերը որոնք հարիւրին 99 վտանգաւոր են ։ և որոնց համար աշխատող ոչ մէկ անգլիացի բանուոր կը գտնուի ։ Ո՞վ որ քանատա գալու կը պատրաստուի ։ Թող չի խարուի շարլաթաններու խօսքերով ։

— Ազատ Բեմոյի մէջ կը կարգանք որ ։ իրեն դէմ բացուած դատի մը առթիւ խմբագրութիւնը դատապարտուեր է 100 ոսկույ տուգանքի մը ։ Խմբագրութիւնը դիմած է վերաքննութեան ։

— Ազատական երեսփոխան և յայտնի հայասէր ։ Լինչ իր ընտրութեան առթիւ գինքը շնորհաւորող Աղեքսանդրիոյ Տիգրան Երկաթ Միութեան նամակով մը սա պատասխանը տուեր է ։ «Շնորհակալութեամբ ընդունած եմ Աղեքսանդրիոյ Ժողովրդական Միութեան շնորհաւորութիւնները և կը յայտնեմ թէ ոչ մէկ ջանք չի պիտի խնայեմ բարուքելու համար հայոց դժբախտ կացութիւնը իրենց գեղեցիկ Մայր Հայաստանին մէջ ։ »

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Գ Ի Ա

Բուրք քիւրտ մեծաւորները և անոնց մերձաւոր բարեկամները Պօլսէն արտաքսուած են Միւսիայն Ապուրի Բէշլարի և Սուլթանի սիրելի Աստղաբաշխ Էպուլ Խուտայի կնոջ եղբայրը ։ Պէտրի պէյը շէ արտաքսուած ։

— Պօլսէն անգլիական ազգերէ կիմացնեն թէ թրքական Գիւրտիսպանի մէջ մեծաւորներու Պօլսէն արտաքսուիլը Պօլսու մէջ լուր կը շրջի թէ՛ երկտեղի մէջ դաւադրութեան մը հետքը երեւան եկած է ։ այս իսկ պատճառով արքունեաց պահակազօրը կրկնապատկուած է ։

— Թէեւ Բ. Գուրը պաշտօնապէս անգլիական դեսպանութեան ծանուցած էր թուրք գինուորներու Թապաէն յետակոչուիլը ։ սակայն մինչեւ այսօր անգլիական դեսպանութիւնը այս մասին ու է լուր մը չուներ ։

— Հասցովոյի մոտ թուրք պուլկար սահմանագծին վրայ պղտիկ ընդհարում մը տեղի ունեցած է այս երկու պիտութեանց գինուորներու միջեւ ։ Թուրք գինուորները սահմանագիծը անց-

նելով կը մտնեն պուլկարական հողը ։ Երկրիս կռուութեան պահակազօրը կը հրաւիրէ թուրքերը ետ քաշուիլ ։ իսկ այս վերջիններս ականջ իսկ չեն ուզեր կախել այս հրաւերին ։ այն ժամանակ Պուլկար պահակազօրը կրակ կընէ ։ Թուրքերը կը պատասխանեն ։ այսպէս բաւական կուր կը մղեն երկուստեք ։ Թրքերը փախուստ կուտան ։ 3 մեռելու ձգելով կուրի վայրը ։ պուլկարներէն վիրաւորուած իսկ չկայ ։

— Թուրքիոյ և Պարսկաստանի միջեւ պատերազմը անխուստփելի կը թուի ։ Վիճելի հողաբաժնի վրայ ։ Լաթիճանի մէջ արդէն մասնակի ընդհարումներ տեղի ունեցած են ։ Շիիթական ցեղերը զենք ի ձեռին կազմու պատրաստ են ։ վայրկեանէ վայրկեան սպասելի է պատերազմ ։ որովհետեւ Բ. Գուրը ամենայն յամառութեամբ անգլիական և ռուսական դեսպանութեանց միջամտութիւնը կը մերժէ ։ Իրաց այս վիճակը Թուրքիան անել վիճակի մը կրնայ ենթարկել ։ — քաղաքական շրջանակները այս մասին շատ յոռետես են ։

Ռ Ո Ւ Ս Ի Ա

— Կէօրկի կարոնք ։ կարմիր շաքարու Բեթերսպուրկեան հերոսը ։ աղերսագիր մը արուած է ընդհանուր դատախաղին ։ բացատրելով թէ ինչպէս վիճի հրաւիրանք Բեթերսպուրկ գացած է ։ անոր անունով գործաւորական կազմակերպութեանց հետ բանակցութեան մտնալու նպատակով ։ ու իրեն թոյլատրուած էր մինչեւ բանակցութիւններու վերջանալը կիսօրինական մնալ Բեթերսպուրկ ։ Հիմայ նկատելով թէ իր այսպէս կիսօրինական կերպով Բեթերսպուրկի մէջ մնալը անհանգուրժելի է ։ կը խնդրէ ։ եթէ կռուութիւնները ու է ոճիր մը չը նկատէր իրեն անցեալ գործառնութիւնը ։ Յունվար 9 ին ցոյցին մասնակցողներուն պէս իրեն ալ պէտք է որ ներէ ։ իսկ եթէ իմ անցեալին մէջ կայ ոճիր մը որ տակաւին անպատիժ կը մնայ ։ դատեցէք զիս որպէս ոճրագործ ու պատժեցէք միւսներուն համանման ։

Կռուութեանը ու է ներում ու խղճահարութիւն չեմ սպասեր ու պերսեր ։ Բեթերսպուրկի մէջ օրինաւոր ճանչցուի իմ մնալը և կամ քայնցէք զիս դատարանի տեղեւ որպէս ոճրագործ ։ Թոյլ տուէք ինձ ազատ ապրիլ ։ Տուէք ինձ միջոց որպէսզի ազատ ու համարձակ պատիւս փրկելու համար ։ կարենամ հանրութեան դար պաշտպանել ։

— «Տու՛մա» ընտրութիւններու մէջ յաղթանակը ։ սահմա-

նագրական ռամկավարական կուսակցութիւնը տարած է գրեթէ բոլորովին ։

— Վիճի նախարարութենէ հրաժարիլը Բեթերսպուրկէն կը հերքուի ։

ՏԵՐ ՂԵՒՈՆԴ ԵՊԻՍԿՈՍ ԵՒ ՇՄԱՆԵԱՆ

ԻՍ ԱՔՍՈՐԻ ԿԵԱՆՔԸ  
ՀԱՆԴԵՐՁ ԾԱՆՈԹՈՒԹԵԱՄԷ  
Ս Ո Ւ Ր Բ Տ Ե Ղ Ե Ա Յ

Լրագրական կանխահաս նկատողութիւններու հետեւանք շատ մը ազգայիններու կողմէ եղած թախանձանաց առջեւ տեղի տալով անցեալ փետրուար ամսուն մէջ սկսուած է հրատարակութիւնը հանդուցեալ Տէր Ղեւոնդ Եպիսկոպոս Շիշմանեանի վերոյիշեալ երկասիրութեան ։ որ 55էն 60 պրակի կրնայ հասնիլ ։ որոնց վեց պրակները արդէն հրատարակ ելած են ։

Հանդուցեալ Գերապատիւ Հեղինակին գրուող յայտնած հաւանութեամբ ներկայ հրատարակութեան զուտ հասոյթէն կարեւոր մաս մը ԲԱՐՆԳՈՐԾԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՒ պիտի յատկացուի ։ այդ պատճառաւ յատկապէս (500) ՀԻՆԳ ՀԱՐԻԻՐ օրինակ կը պատրաստուի ։ անոնց վաճառման արդիւնքը՝ 20,000 դր. ողջ առ այդ նպատակ գործածուելու համար ։

Արդի պահանջմանց բերմամբ փափաքելի է որ այդ գումարէն օգտուին ։ կողկասի արկածեալները ։ Գահիրէի Հայկ. Բար. Միութիւնը եւ Թուրքիոյ այլ եւ այլ տեղերու բանտերուն մէջ հեծեռող դժբաղդ բանտարկեալները ։ որոց դառն կացութեան անձին փորձով ծանօթացած է Սրբազան Հեղինակը ։ Այս նուէրին գործադրութեան եւ պրակներու ժամ առաջ սպասման ջանալու համար այժմէն պէտք է բանակցիլ Մասնախմբիս Գարտուղար Տ. Եղիշէ Թորոսեանի հետ ։

ԿԱՆՆԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ Եղիպտոսի համար 40 դր. ողջ է ։ իսկ Արտասահմանի համար 12 ու կէս ֆր. իւրաքանչիւր պրակ մէկ դր. ողջ կարժէ ։

«ԱՔՍՈՐԻ ԿԵԱՆՔԻՆ» վերաբերեալ ամէն կարգի թղթակցութիւն ։ զրամ եւալն ։ հարկ է ուղղել Մասնախմբիս Հաշուակալ-Քարտուղարի հասցէին ։ որ է Տիար Է. Թորոսեան լը Գէր (Էմբրզ) ։

ԿԱՐԳԱԳԻՐ ՄԱՍՆԱԽՈՒՄԲ Գահիրէ 10 Մարտ 1906

ԾԱՆՈԹ. — Ամերիկայի ։ Պուլկարիոյ ։ եւ կողկասի համար վտահելի գործակալներու պէտքը կայ ։ Գիմել վերոգրեալ հասցէին ։

«Ա. քարտի կեանք» ին համար Մասնախմբիս կողմէ Գիլիպէի համար գործակալ անուանուած է Տիար Աղեքսանդր Տէմիրճիպաշեանը ։

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆԵՐ

Տեղույս աղքատախնամ ընկերութեան գործ. Ժողովո՞ւ մարտ ամսոյ մէջ շնորհակալութեամբ ստացաւ հետեւեալ նուիրատուութիւնները պատ. ազգայիններէ ։

Տիար Տէր և Տիկին Խաչիկ Տամատեան ։ փոխան ծաղկեպսակի հանգուցեալ այրի Տիկին Սօֆի Յովսէփեանի յուզարկուորութեան առթիւ 20 ֆր. ։ Ռափայէլ Գարագաշեան 5 ֆր. ։ Կարապետ Նազմաճեան Ս. Զատիկի տոնի առթիւ միմեանց այցելութենէն զերծ մնալու համար 5 ֆր. ։ Տիար Ասատուր Փափապեան նոյն նըպատակով՝ 10 ֆր. ։ Սարգիս Գիւրտեան 10 ֆ. ։ Անդրանիկ Շիշմանեան 2 ֆր. ։ Արշակ Փաշաեան իր անուան առթիւ 2 ֆր. ։ Ի գիմաց գործ. Ժողովոյ Առնեաղպիւր Առնեաղպետ Ա. Զարպանէեան Ս. Սամուէլեան 29 մարտ 1906

Ոոյն տողերովս կը փութամ խորին շնորհակալութիւնս յայտնել իմ բոլոր ընտանեացու կողմանէ ամէն անոնց ։ որոնք մօտէն թէ հեռուէն իրենց ցաւակցութիւնը յայտնեցին մեզ ։ սիրեցեալ և անմոռանալի հօրս ՄԿՐՏԻՉ ՀՃԻ. ՍՏԵՓԱՆԵԱՆԻ անակնկալ մահուան առթիւ ։ որ հանգեալ ի տէր ամսոյս 19ին և թաղուեցաւ 21ին ։ եկեղեցւոյ բակը ։

Մասնաւոր շնորհակալութիւն պուլկար և օտար անձնաւորութեանց ։ յատկապէս վիճակիս պ. Գաւառապետին և երեսփոխանին ։ սր փութացած էին անձամբ գալ թէ տուն և թէ եկեղեցի ։

Թորոս Մ. Հճի. Ստեփանեան 26 Մարտ 1906

Շ Ո Ւ Մ Լ Ա

ՍՐՂԸ ։ ՍԱԷՏՆԵՆԵԼԻ՛

Պատիւ ունինք ծանուցանել Վառնայի արգոյ հասարակութեան որ ։ Զատիկի երեքօրեայ տօներուն լաւ ժամանց մը ընծայելու համար ։ այս անգամ Պօլսէն հանրածանօթ կատակերգակ Տէրիգօ. որ Սէրվիօի խումբին մէջ կը գտնուի ։ հրաւիրեցինք ։ ներկայացնելու համար Փրանսերէն և իտալերէն լեզուա խիստ զաւեշտական վօտիլիներ և կատակերգութիւններ ։

Յիշեալ կատակերգակը վերջերս Պօլսոյ բեմին վրայ իր շանդալից համբաւովը ։ կատակերգութեան ճիւղին մէջ ։ Բօքլէնը յիշեցնելով — մարդը մամլոյ գովեստին առարկան եղաւ ։ Բացառաբար մի քանի ներկայացուցիչներ տալու մեր առաջարկը ընդունած ըլլալուն ։ կը հրաւիրենք Վառնայի հասարակութիւնը օգտուիլ այս բացառիկ առիթէն ։

Մտից տոմսակները այսօրու ընէ կը վաճառուին Օրա՛հ Պուլկարիա ։ Գին թէզէրով 2 ֆր. ։ Ա. կարգ 1.50 ֆր. ։ Բ. կարգ 1 ֆր. ։ Տնօրէնք Միհրան և Հրանդ